

**Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի լիցենզիայի  
տրամադրման Հրապարակային պայմանագիր թիվ՝ 10.09.2015**

1. Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ ՓԲԸ-ն (այսուհետ՝ ԷԿԵՆԳ), ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից հավատարմագրված հավաստագրման կենտրոն է, որը ՀՀ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց տրամադրում է Նույնականացման Քարտի ընթերցման ծրագիրը և ծրագրի լիցենզիան, ինչպես նաև վերջիններիս օգտագործման ընթացքում՝ իրականացնում սպասարկման ծառայություններ:
2. Սույն Հրապարակային պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանում է ԷԿԵՆԳ-ի կողմից մատուցվող ծառայությունների առարկան, պայմանագրի գործողությունը և փոփոխման կարգը, իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, գաղտնիությունը և սպասարկման կարգը:
3. Սույն Պայմանագրի առաջարկն ուղղված է այն իրավաբանական և ֆիզիկական անձանց, որոնք վճարում են Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի լիցենզիայի ձեռքբերման տարեկան վճարը (տես՝ 6.1 կետ) հետևելով ԷԿԵՆԳ-ի պաշտոնական կայքում սահմանված գործողությունների հաջորդականությանը, որի արդյունքում էլ տալիս են համաձայնություն սույն հրապարակային պայմանագրին և այդ պահից հանդիսանում ԷԿԵՆԳ-ի նույնականացման քարտի ընթերցման ծրագրի Լիցենզիայի **Օգտագործող: Պայմանագրի գործողության սկիզբ է համարվում** ԷԿԵՆԳ-ի կողմից տրամադրված լիցենզիայի ժամկետի սկիզբը, որը գործում է իր թողարկման օրվանից 1 տարվա ժամանակահատվածով:
4. ԷԿԵՆԳ-ը և Օգտագործողը (այսուհետ երկուսը միասին կարող են հիշատակվել Կողմեր կամ նրանցից յուրաքանչյուրը Կողմ) երաշխավորում են միմյանց, որ ունեն համապատասխան իրավունակություն և գործունակություն, իրավունքներ և լիազորություններ, որոնք անհրաժեշտ և բավարար են՝ սույն Պայմանագիրը կնքելու և պայմանները պատշաճ կատարելու համար:
5. **Պայմանագրի առարկան**  
Կողմերը գալիս են համաձայնության, որ ԷԿԵՆԳ-ը՝
  - 5.1 պարտավորվում է Օգտագործողին տրամադրել սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) օգտագործման ոչ բացառիկ իրավունքը (լիցենզիան՝ սույն Պայմանագրով ամրագրված դրույթներին և պայմաններին համապատասխան: Ընդ որում, Ծրագրի օգտագործման լիցենզիան տրամադրվում է որոշակի՝ միայն մեկ համակարգչային սարքում տեղադրելու միջոցով այն օգտագործելու իրավունքով, ակտիվացվում է տվյալ սարքի MAC հասցեի նույնականացման եզակի ցուցիչին կցելու եղանակով և օգտագործողի կողմից Ծրագրային փաթեթի ամբողջականությանը որևէ եղանակով պատճառված վնասի կամ կորստի դեպքում լիցենզիան չի կարող անհատույց վերականգնվել կամ փոխարինվել:
  - 5.2 Սույն Պայմանագրով Օգտագործողին չի փոխանցվում Ծրագրի նկատմամբ սեփականության իրավունք:
  - 5.3 Ծրագիրն Օգտագործողի օգտագործմանն է տրամադրվում հարկային հաշվի հիման վրա՝ սույն Պայմանագրի 6.4. ենթակետով սահմանված կարգով:

## **6 Պայմանագրի արժեքը և վճարման կարգը**

- 6.1 Սույն Պայմանագրով նախատեսված Ծրագրի օգտագործման գինը՝ մեկ լիցենզիայի (միավորի) համար, Պայմանագրի 6.4. ենթակետով սահմանված հարկային հաշվի Կողմերի կողմից վավերացման պահից հաշվարկված մեկ (և յուրաքանչյուր հաջորդ տարվա համար) տարվա համար կազմում է 10.000 (տաս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:
- 6.2 Սույն Պայմանագրի գործողության պահից սկսած՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Օգտագործողը՝ սույն պայմանագրի հիման վրա և պայմանագրով սահմանված ԷԿԵՆԳ-ի բանկային հաշվին է վճարում պայմանագրի 6.1 ենթակետով սահմանված միավոր գնով հաշվարկված՝ ընդհանուր արժեքը (Ծրագրի օգտագործման առաջին տարվա համար): Յուրաքանչյուր հաջորդ տարվա համար վճարումը կատարվում է՝ նախորդ վճարումից հետո ոչ ուշ, քան 12-րդ ամսվա ավարտը՝ ԷԿԵՆԳ-ի կողմից ներկայացված հարկային հաշվի Օգտագործողի կողմից վավերացման պահից 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ գործում է սույն Պայմանագրի 9.2 ենթակետը: Ընդ որում, ԷԿԵՆԳ-ի կողմից հարկային հաշիվ ներկայացվում է, եթե Օգտագործողը վերջինիս հայտնում է հաջորդ տարվա համար ևս սույն պայմանագրի շրջանակներում տրամադրված լիցենզիաների օգտագործումը շարունակելու առաջարկ:
- 6.3 Սույն Պայմանագրի 6.2 ենթակետում նշված ժամկետում վճարումը կատարելու դեպքում՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ԷԿԵՆԳ-ը Օգտագործողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկում է Ծրագրի թեստային տարբերակը, որը Օգտագործողը կարող է անվճար օգտագործել 10 օրացուցային օր, որի ընթացքում Լիցենզիայի ձեռք բերման նպատակով Օգտագործողը ԷԿԵՆԳ-ի սույն պայմանագրով սահմանված էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկում Լիցենզիայի ակտիվացման էլեկտրոնային բանալին:
- 6.4 Սույն պայմանագրի 6.3 ենթակետով սահմանված ժամկետում Լիցենզիայի ակտիվացման էլեկտրոնային բանալին ստանալու դեպքում՝ ԷԿԵՆԳ-ը 3 (երեք) բանկային օրվա ընթացքում Օգտագործողին է տրամադրում հարկային հաշիվ, որի Օգտագործողի կողմից վավերացվելու պահից Ծրագրի օգտագործման ոչ բացառիկ իրավունքը՝ լիցենզիան համարվում է Օգտագործողին տրամադրված: Սույն ենթակետով սահմանված հարկային հաշվի հետ մեկտեղ ԷԿԵՆԳ-ը Օգտագործողին է տրամադրում «Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի համառոտ ուղեցույցը: Սույն ենթակետով սահմանված հարկային հաշվի Օգտագործողի կողմից վավերացումը հավաստում է Ծրագրի օգտագործման իրավունքի՝ լիցենզիայի և «Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի համառոտ ուղեցույցի Օգտագործողին տրամադրման փաստը:

## **7. Պայմանագրի գործողությունը և փոփոխման կարգը**

- 7.1 Օգտագործողը համաձայնում է, որ ԷԿԵՆԳ-ի կողմից միակողմանիորեն Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Այս դեպքում ԷԿԵՆԳ-ը պատշաճ տեղեկացնում է Օգտագործողներին, Պայմանագրի նոր խմբագրությունն՝ իր պաշտոնական կայքում տեղադրելու միջոցով: Պայմանագրի նոր խմբագրությունն ուժի մեջ է մտնում կայքում տեղադրելուց մեկ ամիս հետո, եթե Պայմանագրի նոր խմբագրությամբ սահմանված չէ Պայմանագրի փոփոխության ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ:

## **8. Կողմերի իրավունքներ, պարտականություններ, երաշխավորություններ**

### **8.1 ԷԿԵՆԳ-ը պարտավոր է՝**

- 8.1.1 Ծրագիրը և դրա օգտագործման լիցենզիան Օգտագործողին տրամադրել սույն պայմանագրի 6.4 ենթակետով սահմանված ժամկետում:

- 8.1.2 Անվճար կատարել Ծրագրի օգտագործման հետ կապված անհրաժեշտ հեռահար սպասարկում՝ հեռախոսային կամ էլեկտրոնային փոստի օգնության ծառայության միջոցով: Ծրագրի օգտագործմանն առնչվող հարցերի և խնդիրների հեռախոսային սպասարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում ճանաչված աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 10:00-ից 17:00 «Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի համառոտ ուղեցույցում» նշված կոնտակտային տվյալներով: Առաջացած տեխնիկական խնդիրները, որպես կանոն, ենթակա են լուծման 1-ից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ կախված խնդրի բարդությունից:
- 8.1.3 Ծրագրի բարելավումների, արդիականացման կամ փոփոխությունների դեպքում հրապարակավ ekeng.am կայքէջի միջոցով տեղեկացնել Օգտագործողին՝ նշելով կատարված փոփոխությունները և բարելավումները:
- 8.1.4 Ծրագրի արդիականացման կամ փոփոխությունների դեպքում Օգտագործողին անվճար տրամադրել հատկացված Ծրագրին համարժեք նորացված ծրագրային փաթեթը, որը պետք է ապահովի առնվազն այն նույն գործառնությունները, որոնք առկա են եղել նախկինում տրամադրված Ծրագրի տարբերակում:
- 8.1.5 Օգտագործողի կողմից պայմանագրով սահմանված վճարումը և ակտիվացման բանալին ստանալուց հետո գեներացնել Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի լիցենզիան և իրականացնել դրանց պատշաճ պահպանումը՝ հատուկ պահոցում:
- 8.1.6 Սույն Պայմանագրի 6.4 ենթակետով սահմանված կարգով տրամադրել Օգտագործողին «Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի համառոտ ուղեցույցը»: Ծրագրի պատշաճ գործունեության համար անհրաժեշտ օպերացիոն համակարգի, ծրագրային ապահովման և սարքակազմի նվազագույն պահանջները սահմանվում են «Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի համառոտ ուղեցույցում»:
- 8.1.7 Օգտագործողին տրամադրել համապատասխան տեղեկատվական ծառայություն՝ հեռահաղորդակցության միջոցներով:

## **8.2 Օգտագործողը պարտավոր է՝**

- 8.2.1 Տեղեկացնել ԷԿԵՆԳ-ին ընկերության տվյալների վերաբերյալ, ինչպես նաև ԷԿԵՆԳ-ի պահանջով՝ ներկայացնել վճարումը հաստատող փաստաթղթեր:
- 8.2.2 Վճարել ԷԿԵՆԳ-ին սույն Պայմանագրի 6.2 ենթակետով սահմանված կարգով և ժամկետներում:
- 8.2.3 Ծրագիրն օգտագործել սույն պայմանագրի դրույթներին համապատասխան:
- 8.2.4 Պարբերաբար այցելել ԷԿԵՆԳ-ի պաշտոնական կայք՝ Պայմանագրի փոփոխությունների և լրացումների, ծառայության սպասարկման կարգի մասին պատշաճ տեղեկատվություն ունենալու համար:
- 8.2.5 Երրորդ անձանց չփոխանցել Ծրագրի օգտագործման իրավունքը առանց ԷԿԵՆԳ-ի նախնական համաձայնության:
- 8.2.6 Չչարաշահել Ծրագիրը կամ դրանց մասերն օգտագործել ՀՀ օրենսդրությանը, ՀՀ կողմից վավերացված միջազգային համաձայնագրերի պահանջներին հակասող նպատակներով:
- 8.2.7 Ձերձ մնալ Ծրագիրը որևէ կերպ փոփոխության ենթարկելու, վերացնելու կամ այլ կերպ վնաս հասցնելու, ինչպես նաև դրանց հետ կապված ԷԿԵՆԳ-ի իրավունքներին:

### **8.3 ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի՝**

8.3.1 Կատարել իր կողմից օգտագործվող ծրագրային ապահովման արդիականացում և անհրաժեշտության դեպքում՝ պահանջել Օգտագործողից թարմացնել օգտագործվող ծրագրային ապահովումը՝ հաշվի առնելով կատարված ծրագրային արդյունավետությունը բարձրացնող փոփոխությունները: ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների մատուցելուց, եթե Օգտագործողը օգտագործում է անհամատեղելի ծրագրային ապահովում:

8.3.2 Հրաժարվել անհատույց փոխարինելու կամ վերակազմելու Օգտագործողի կողմից ձեռք բերված ծրագրի լիցենզիան Համակարգչի կորստի, վնասվելու կամ փոխելու դեպքում՝ համաձայն սույն պայմանագրի 5.1 կետի:

8.3.3 Վարել Օգտագործողի Լիցենզիաների կառավարման պահոցը, տվյալների, էլեկտրոնային փաստաթղթերի և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ այլ տեղեկատվության արխիվը:

8.3.4 Պահպանել Ծրագրի նկատմամբ մտավոր սեփականության և դրան հարակից այլ բոլոր իրավունքները:

### **8.4 Օգտագործողն իրավունք ունի՝**

8.4.1 Ստանալ Նույնականացման քարտի ընթերցման ծրագիրը և ծրագրի արտոնագիրը 6.2 կետում նշված վճարումը ապահովելուց հետո:

8.4.2 Պայմանագրի գործողության ընթացքում դիմել ԷԿԵՆԳ-ին՝ ծրագրային հարցերի առնչությամբ:

8.4.3 ԷԿԵՆԳ-ից հարկային հաշիվ ստանալու անհրաժեշտության դեպքում դիմել ընկերությանը համաձայն 6.2 կետի:

## **9. Կողմերի պատասխանատվությունը**

9.1.1 Պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում համաձայն ՀՀ օրենսդրության:

9.1.2 Օգտագործողի կողմից սույն Պայմանագրի 6.2 ենթակետում նշված վճարման ժամկետի և կարգի խախտման դեպքում Օգտագործողը պարտավորվում է անհապաղ դադարեցնել Ծրագրի օգտագործումը և կասեցնել լիցենզիայի վավերությունը: Ծրագրի օգտագործումը չդադարեցնելու դեպքում՝ ԷԿԵՆԳ-ի գրավոր պահանջով, Օգտագործողը պարտավորվում է ԷԿԵՆԳ-ին վճարել տույժ՝ Հավելված 1-ում նախատեսված Պայմանագրի ընդհանուր արժեքի 1.0 ( մեկամբողջ գրո) տոկոսի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

9.1.3 ԷԿԵՆԳ-ի կողմից սույն Պայմանագրի 6.4. ենթակետում նշված Ծրագրի օգտագործման իրավունքի՝ լիցենզիայի տրամադրման ժամկետի խախտման դեպքում՝ Օգտագործողի գրավոր պահանջի առկայության դեպքում՝ ԷԿԵՆԳ-ը պարտավորվում է Օգտագործողին վճարել տույժ՝ նախատեսված Պայմանագրի

ընդհանուր արժեքի 0.1 (գրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով յուրաքանչյուր կետանցի օրվա համար:

9.1.4 Տույժի վճարումը չի ազատում Կողմերին Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումից:

9.1.5 Օգտագործողի կողմից սույն Պայմանագրով սահմանված պարտականությունների խախտման դեպքում Օգտագործողը պարտավորվում է ԷԿԵՆԳ-ին փոխհատուցել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վնասները:

9.1.6 ԷԿԵՆԳ-ը պատասխանատվություն չի կրում Օգտագործողի մեղքով առանց վերջինիս մեղքի, այդ թվում՝ համակարգչային սարքը խափանվելու, վնասվելու կամ այլ ցանկացած պատճառով Ծրագրի օգտագործման անհնարինության հետևանքով Օգտագործողին պատճառված վնասների, բաց թողնված օգուտների, տեղեկատվության կամ այլ կորստի համար:

9.1.7 Օգտագործողը սույնով պատշաճ ծանուցված է համարվում առ այն, որ Օգտագործողի որոշակի համակարգչային սարքում Ծրագիրը տեղադրելու և այն ակտիվացնելու պահից ԷԿԵՆԳ-ը պարտավորություն չի կրում իրականացնելու Ծրագրի օգտագործման լիցենզիայի տեղափոխություն մեկ այլ համակարգչային սարքում: Ցանկացած այլ սարքում Ծրագիրը տեղադրելու և ակտիվացնելու նպատակով Օգտագործողը պետք է ձեռք բերի Ծրագրի նոր լիցենզիա ԷԿԵՆԳ-ի կողմից տվյալ պահին սահմանված վաճառքի արժեքի չափով վճարում կատարելու դիմաց:

## **10. Պայմանագրի վաղաժամկետ դադարում**

10.1 Պայմանագրի գործողությունը դադարում է սահմանված ժամկետում Օգտագործողի կողմից վճարումները չկատարելու դեպքում և Կողմերի պահանջով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

10.2 Օգտագործողի նախաձեռնությամբ Պայմանագրի դադարեցման/լուծման դեպքում՝ Օգտագործողը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել ԷԿԵՆԳ-ին, Պայմանագրի դադարեցման/լուծման օրվանից առնվազն 15 օրացուցային օր առաջ:

10.3 Օգտագործողի կողմից սույն պայմանագրի պահանջները խախտելու դեպքում՝ ԷԿԵՆԳ-ը կարող է հանդես գալ Պայմանագրի դադարեցման/լուծման նախաձեռնությամբ, որի դեպքում՝ ԷԿԵՆԳ-ը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել Օգտագործողին, Պայմանագրի դադարեցման/լուծման օրվանից առնվազն 15 օրացուցային օր առաջ: Այլ դեպքերում ԷԿԵՆԳ-ի նախաձեռնությամբ Պայմանագրի դադարեցման/լուծման դեպքում՝ ԷԿԵՆԳ-ը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել Օգտագործողին, Պայմանագրի դադարեցման/լուծման օրվանից առնվազն 6 ամիս առաջ:

10.4 Պայմանագրի վաղաժամկետ դադարումը/լուծումը կողմերին չի ազատում ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումից:

10.5 Պայմանագրի 10.2 ենթակետով սահմանված կարգով Պայմանագրի դադարեցման/լուծման դեպքում վճարված տարեկան վճարը ետ վերադարձման ենթակա չէ, իսկ տրամադրված լիցենզիայի վավերությունը կասեցվում է:

## 11. Գաղտնիությունը

11.1 Կողմերը պարտավորվում են չհրապարակել սույն Պայմանագրի պայմանները, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել մյուս Կողմի կոնֆիդենցիալ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար և չհրապարակել այն երրորդ անձանց առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

## 12. Անհաղթահարելի ուժ

12.1 Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և/կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, սաբոտաժը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումը:

12.2 Անհաղթահարելի ուժի ի հայտ գալու դեպքում Կողմը, որի պարտավորությունների պատշաճ կատարմանը խոչընդոտում է անհաղթահարելի ուժը, պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին, որն իրավունք ունի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր ծանուցելով մյուս Կողմին, եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի:

## 12. Վեճերի լուծումը

12.1 Սույն պայմանագրի հետ կապված և դրանից բխող բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով դրանք ծագելու օրվանից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում: Նշված ժամկետում համաձայնության չգալու դեպքում Կողմերն իրավասու են վեճի լուծումը հանձնել Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի քննությանը:

### ԷԿԵՆԳ-ի տվյալները

---

Իրավաբանական հասցեն՝	ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 1
Գործունեության հասցեն՝	ք. Երևան, Տիգրան Մեծի 4
Բանկային տվյալները՝	ԱԿԲԱ Կրեդիտ Ազրիկոլ ՓԲԸ, հ/հ 22041-0121291000
ՀՎՀՀ՝	02707093
Հեռախոսահամարը՝	010512882
Էլ. Փոստի հասցեն՝	cssupport@ekeng.am,
Տնօրեն՝	Արթուր Թունյան